

Քեամին էզար, զԴաւթի մեանդիլ¹⁾ առից, տարաւ. տարաւ,
էթալ Խանդիւթ խաթնը տուն յէռջիւ:

Խանդիւթ խաթիւն էլաւ տիւս, իրիշկից՝ թող ախշար ընիր
ը, իրիշկից գետըն՝ զէնու մեանդիլ տեսաւ. տեսաւ, առից, խուս
էրաւ²⁾, էսաց.— ԸՏՂՂ, էս Դաւթի մեանդիլն ի:

Տեսաւ, որ գրգռուց ինկիր ի դեաշտ, տղէն էլ տուն չի: Է-
լաւ, զինք ձին խեծաւ, քշից, կինաց. տեսաւ՝ թող ու դիւման կ'ըլ-
նը, ձիանցտարու ոտաց ձէն կ'կեայ, ամա զադ չ'տըսնը:

Էն էլ կանգնաւ էնդեղ աղօթ.

«Սարիր, ձիւրիր ստեղծող Աստուած,

Տիւ զխէր ու տղէն իրարուց չոկէք.

Ին դաս խրիշտակ, ձի իմ կանչը,

Տիւ զխէր ու տղէն իրարուց չոկէք»:

Էլ չ'չոկուան, հալա կ'կուռին:

Տիր ըմ էլ կանչից.

«Ո՛վ սուրբ մայր Աստուածածին, քիզի կ'կանչիմ,

Տիւ խէր տղէն մէմէկուց չոկիս, մէմէկ չսպանին»:

Ինչ կանչից, էրկուս էլ ձիուց էջան տակ, խասան իրարու
քեռշարը:

Մհեր խասաւ, վիրուց զԴաւթի, էզար գետըն. Դաւթի մե-
չաց էրակ կտրաւ, չուր մէչք ինի կինաց մեանչ խողուն: Չեռ էտու
ջերէն զտանակ էխան, զԴաւթի վիզ տը կտրէր:

Դաւթի էլաց, էսաց.— Ա՛յ տղայ, տիւ ըզը կ'սպանիս, իմ կտըր-
ճը ձեռնէն ինչըն տը պրծնիս:

Էսաց.— Քիւ կտրիճ վո՛վն ի:

Էսաց.— Իմ կտրիճ էն ը, ինչ ոսկը բազբանդ գեոյ վեար
թիւին:

Տղէն իրիշկից վեար ուր թիւին, տեսաւ ոսկը բազբանդ վեար
ուր թիւին կապուկ ի. էլաց, խասաւ, զԴաւթի գլեռն պագնից,
էսաց.— Իմ խէր տիւն իս, իս քի մեղայ:

1) Թաշկինակ: 2) Հոտ քաշեց: